

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի չորրորդ եռամսյակի ամփոփում, այդ թվում դեկտեմբեր ամսվա նախադեպի ամփոփում

Հաշտարարի գրասենյակն իր գործունեության չորրորդ եռամսյակում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 161 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 161 բողոքներից 97-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա 97 բողոքներից 24-ը չորրորդ եռամսյակում ստացվել են գրավոր տեսքով: Քննած 24 պահանջներից 6-ի վերաբերյալ կայացվել է պահանջը մերժելու վերաբերյալ որոշում, 10 պահանջները բավարարվել են՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդին և կազմակերպությանը հաշտեցնելու միջոցով, մեկ պահանջի վերաբերյալ կայացվել է մասնակի բավարման որոշում, իսկ մնացած 7 պահանջները դեռևս գտնվում են քննության գործընթացում:

2009թ.-ի չորրորդ եռամսյակում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	161
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	97
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	45
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որը օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	23
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման վիստրը	20
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	24
1.4. 1 ապահովագրական դեպքերի հետ	9
1.4. 2 վարկային գործարքների հետ	10
1.4.3 ավանդային գործառնությունների հետ	2
1.3.2.4 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկումատով կատարվող քարտային գործարքների և հաշվի սպասարկման) հետ	3

2009թ.-ի դեկտեմբեր ամսվա ընթացքում ընդհանուր բողոքների քանակը	55
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	33
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	10
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որը օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	8
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	7
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	10
1.4. 1 ապահովագրական դեպքերի հետ	3
1.4. 2 վարկային գործարքների հետ	3
1.4.3 ավանդային գործառնությունների հետ	1
1.3.2.4 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկոմատով կատարվող քարտային գործարքների և հաշվի սպասարկման) հետ	3